

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

1 ապրիլի 2014 թ.

N 192-Ն

ք. Ստեփանակերտ

**ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՎԱԾ ՏԱՐԱԾՔԻ, ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԼՅԱԿՈՒՅՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ, ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Ընդերքի մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետը և 60-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել՝

1) օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

## Կ Ա Ր Գ

### ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՎԱԾ ՏԱՐԱԾՔԻ, ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԼՅԱԿՈՒՅՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

#### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Ընդերքի մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգրք) 15-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով սահմանված օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության (այսուհետ՝ լիազոր մարմին) կողմից մշտադիտարկումների իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգում օգտագործվող հասկացությունները կիրառվում են այն իմաստներով, որոնք սահմանված են օրենսգրքով:

3. Սույն կարգի իմաստով լեռնային աշխատանքներ են համարվում երկրի ընդերքից օգտակար հանածոների արդյունահանման, այդ թվում՝ նաև նախնական մշակման աշխատանքային պրոցեսները, իսկ պոչանքային տնտեսություն է համարվում մետաղական օգտակար հանածոների հարստացման արդյունքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադրման և պահպանման համար նախատեսված հատուկ շինությունների ու սարքավորումների համակարգը:

#### II. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԸ

4. Օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների տարածքում մշտադիտարկումների (այսուհետ՝ մշտադիտարկումներ) իրականացումը հնարավորություն կընձեռի ստեղծելու տեղեկատվական հենք՝ հանքերի փակումից հետո շրջակա միջավայրի և բնակչության առողջության ու անվտանգության վրա օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով հետագա աղետների կանխման և կանխարգելման միջոցառումների մշակման համար:

5. Մշտադիտարկումների իրականացման հիմնական նպատակն է ստանալ տեղեկատվություն փակված հանքի, արդյունահանման արդյունքում առաջացած արտադրական լցակույտերի տարածքի երկրաբանական միջավայրի, հիդրոերկրաբանական (պոչանքային տնտեսություններից արտահոսքերի հետևանքով ջրերի որակի և ռեժիմի փոփոխություն, դրենաժային ջրերի առաջացում) և

ինժեներատերկրաբանական (լեռնային ապարների զանգվածում կամ երկրի մակերևույթին դեֆորմացիաների զարգացում, բացահանքերի կողերի լեռնային ապարների և արտադրական լցակույտերի շեպերի դեֆորմացում, սողանքային և կարստային գործընթացների ակտիվացում, տեխնածին երկրաշարժերի առաջացում) պայմանների փոփոխության մասին:

### III. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

6. Մշտադիտարկումների կառուցվածքն ու բովանդակությունը, դիտակետերի տեղադրումը և մշտադիտարկումների հաճախականությունը յուրաքանչյուր կոնկրետ օբյեկտում որոշվելու է՝ ելնելով դրա երկրաբանական, հիդրոերկրաբանական, ինժեներատերկրաբանական պայմանների բարդությունից, հանքավայրի մշակման եղանակից և արտադրական լցակույտերի տեղադիրքից, նախատեսվող ռեկուլտիվացիայից, ինչպես նաև պայմանավորված է լինելու հանքավայրում ընդերքօգտագործողի կողմից իրականացված մշտադիտարկումների տվյալներով:

7. Մշտադիտարկումների կառուցվածքն ու բովանդակությունը, դիտակետերի տեղադրումը և մշտադիտարկումների հաճախականությունն ամրագրվում է հանքի փակման ծրագրում ներառված օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման ծրագրով, որը բաղկացած է տեքստային մասից և գծագրական հավելվածից: Մշտադիտարկումների իրականացման ծրագիրը շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ ենթակա է վերանայման՝ ներկայացվող հանքի փակման վերջնական ծրագրին համապատասխան:

8. Մշտադիտարկումներն իրականացվում են լեռնային աշխատանքների ազդեցության երկու գոտիներում: Առաջին գոտին, որտեղ անմիջապես իրականացվել են արդյունահանման աշխատանքները, և տեղադրված են արդյունահանման հետ կապված տեխնոլոգիական օբյեկտները, փաստացիորեն համընկնում է լեռնահատկացման սահմանների հետ: Երկրորդ՝ զգալի ազդեցության գոտու սահմանները որոշվում են վտանգավոր արտածին երկրաբանական պրոցեսների հնարավոր ազդեցության, ստորերկրյա ջրահոսքերի առաջացման ու զարգացման պայմանների, հիդրոդինամիկ ռեժիմի կանխատեսվելիք խախտման մասին տվյալների հիման վրա:

9. Մշտադիտարկումների կառուցվածքն ու բովանդակությունը կանխորոշող հիմնական գործոններն են՝

1) լեռնային ապարների տեղադրման պայմանները, դրանց քիմիական բաղադրության, ջրաֆիզիկական և ֆիզիկամեխանիկական հատկությունների փոփոխականությունը, տեկտոնական կառուցվածքի առանձնահատկությունները, ճեղքավորվածության, սողանքային և կարստային երևույթների առկայությունն ու դրանց զարգացումը և այլն:

2) արտածին երկրաբանական պրոցեսների զարգացման տեսակետից բարենպաստ, անկայուն, հեշտ դեֆորմացվող ապարների առկայությունը:

3) ջրատար հորիզոնների տեղադրման պայմանները, ջրատարողունակ ապարների հզորությունների և ֆիլտրացիոն հատկությունների փոփոխականությունը, լեռնային փորվածքների ջրի ներհոսքի և հանքախորշային ջրերի առկայությունը:

4) հիդրոքիմիական պայմանները:

5) լեռնային փորվածքների ջրակալվածությունը պայմանավորող հնարավոր ջրաղբյուրները:

6) արդյունահանող կազմակերպության արտադրական լցակույտերի տեղադրման, պահպանման և տեղափոխման կառույցների առկայությունը:

10. Մշտադիտարկումների իրականացման դիտակետերի ընտրության ժամանակ հաշվի են առնվում հետևյալ առանձնահատկությունները՝

1) տարբեր ջրատար հորիզոնների առկայության դեպքում նմուշառումն իրականացվելու է յուրաքանչյուր հորիզոնից, մեկ հզոր հորիզոնի դեպքում՝ նրա տարբեր կետերից:

2) հանքավայրի տարածքում ստորգետնյա ջրերի ջրաբաշխիչի, հակադարձ ներմղման համակարգի առկայության դեպքում դիտանցային հորատանցքերը տեղադրվելու են հիդրոդինամիկ ազդեցությամբ ամբողջ տարածքում, ընդ որում, հորատանցքերի մի մասը տեղադրվելու է ջրի վերցման և հետմղման համակարգերի միջև:

3) եթե արդյունահանված տարածքները կապված են հիդրոերկրաբանական տեսակետից փակ շերտերի հետ, ապա դիտակետերը տեղադրվելու են շերտի սահմանի երկու կողմերից:

4) լեռնային փորվածքներում դիտակետերը նպատակահարմար է տեղադրել փորվածքների բացահայտված և հնարավոր դեֆորմացման, տեկտոնական երևույթների զարգացման վայրերում:

5) ստորերկրյա ջրերի ծախսի, մակարդակի և քիմիական կազմի վրա հնարավոր ազդեցություն ունեցող օբյեկտներում (պոչամբարներ, շլամակուտակիչներ, պարզեցման լճակներ և այլ կառույցներ) նմուշառումը նպատակահարմար է իրականացնել աղտոտման ենթակա ջրատար հորիզոններից:

11. Հենակետային ցանցում ընդգրկված բոլոր դիտակետերի տեղադիրքն արտացոլվելու է միասնական կորդինատային համակարգով ներկայացված մշտադիտարկումների ծրագրի բաղկացուցիչ մաս հանդիսացող գծագրական հավելվածում:

12. Մշտադիտարկումների իրականացման արդյունքները տարեկան կտրվածքով ամփոփվում են լիազոր մարմնի կողմից և եռամսյա ժամկետում ներկայացվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտադրական ենթակառուցվածքների նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր փրկարար ծառայություն, իսկ վտանգի հայտնաբերման դեպքում՝ անմիջապես:

#### **IV. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ**

13. Օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով կարող են իրականացվել շրջակա միջավայրի և ենթակառույցների հետևյալ բաղադրիչների մշտադիտարկումներ՝

- 1) օգտակար հանածոների արդյունահանված տարածքում՝
  - ա. լեռնային փորվածքների ամրակապման վիճակ,
  - բ. ապարների ֆիզիկամեխանիկական հատկություններ և ճեղքավորվածություն,
  - գ. կարստային և սողանքային երևույթների առկայություն, դրանց չափերի փոփոխություն,
  - դ. ստորգետնյա եղանակով արդյունահանված տարածքների մակերևույթի ուղղաձիգ դեֆորմացիաներ՝ հնարավոր նստեցումների բացառման նպատակով,
  - ե. բացահանքերի կողերի դեֆորմացիաներ՝ սողանքների և փլուզումների գնահատման նպատակով,
  - զ. հանքախորշային ջրերի ֆիզիկական հատկություններ, քիմիական կազմ, ծախս, մակարդակ և ջերմաստիճան,
  - է. ջրհավաք և դիտակետային հորատանցքերի հորատաբերանների, զտիչների, ամրակապման խողովակների և արտախողովակային ջրային հոսքերի իրավիճակ,
  - ը. ռեկուլտիվացված բացահանքի հատակի և կողերի բնահողային հատված.
- 2) արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տարածքում՝
  - ա. մակերևութային և ստորգետնյա ջրերի քիմիական կազմ և ծախս,
  - բ. ստորգետնյա աղբյուրների քիմիական կազմ, մակարդակ, ծախս, ջերմաստիճան և ֆիզիկական հատկություններ,
  - գ. ռելիեֆի լանջերի դեֆորմացիաներ՝ սողանքների և փլուզումների գնահատման նպատակով,
  - դ. բուսականության տեսակային կազմ և հաբիտուս, կենդանական աշխարհի վիճակ,
  - ե. պոչամբարների տեխնիկական վիճակ,
  - զ. պոչանքային տնտեսության օբյեկտներից արտահոսքեր և հողերի աղտոտվածություն՝ արտահոսքի վայրից ռելիեֆի ավելի բարձր և ավելի ցածր հիպսոմետրիկ բարձրություններում,
  - է. ռեկուլտիվացված արտադրական լցակույտերի բնահողային հատված,
  - ը. հարակից տարածքների հողերի ջրային-աղային հաշվեկշիռ:

## V. ԱՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

14. Օգտակար հանածոների հանքավայրերի փակման ժամանակ առանձնահատուկ խնդիր է մշտադիտարկումների իրականացման տևողությունը:

15. Հանքերի կոնսերվացման ժամանակ մշտադիտարկումներն իրականացվելու են կոնսերվացման ամբողջ ընթացքում, իսկ հանքերի լուծարման ժամանակ՝ մինչև երկրադինամիկ, հիդրոդինամիկ և շրջակա միջավայրի հնարավոր աղտոտվածությունը բնութագրող ցուցանիշների կայունացումը:

16. Մշտադիտարկումների իրականացումը դադարեցվում է օրենսգրքով սահմանված կարգով արտադրական լցակույտերը՝ որպես տեխնաժին հանքավայր տրամադրելու դեպքում:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

## Կ Ա Ր Գ

### **ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՎԱԾ ՏԱՐԱԾՔԻ, ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԼՑԱԿՈՒՅՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ**

#### **I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով կարգավորվում են Ընդերքի մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսգրքի 60-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների (այսուհետ՝ մշտադիտարկումներ) իրականացման վճարների չափերի հաշվարկումը և վճարման հետ կապված հարաբերությունները:

2. Մշտադիտարկումների իրականացման հաշվարկային բազային չափ է համարվում հանքի փակման ծրագրի բաղկացուցիչ մաս հանդիսացող մշտադիտարկումների ծրագրով նախատեսված օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով իրականացվող մշտադիտարկումների նախահաշվային արժեքը:

#### **II. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ**

3. Համաձայն սույն կարգի՝ մշտադիտարկումների իրականացման նպատակով վճարներ կատարողներ են Ընդերքի մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսգրքով սահմանված օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործողները:

#### **III. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

4. Մշտադիտարկումների իրականացման նպատակով վճարման ենթակա գումարների հատկացումը ընդերքօգտագործողի կողմից կատարվում է նախնական հատկացման և ընթացիկ հատկացումների ձևով:

5. Մշտադիտարկումների իրականացման նպատակով նախնական հատկացումը ընդերքօգտագործողի կողմից կատարվում է համապատասխան ընդերքօգտագործման մասին պայմանագրի ստորագրման օրվանից հետո մեկ ամսվա ընթացքում:

6. Ընթացիկ հատկացումները կատարվում են ընդերքօգտագործման իրավունքով սահմանված ժամանակահատվածի յուրաքանչյուր տարվա համար՝ մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 30-ը, հատկացումների չափը հաշվարկելով սույն կարգի 10-րդ

կետում նշված կարգով (բանաձևով) Ժ-ն հաշվարկելով կամ ընդունելով որպես ընդերքօգտագործման իրավունքով սահմանված ժամկետ՝ տարիներով:

7. Վերջին տարվա համար ընթացիկ հատկացումներ չեն կատարվում:

#### **IV. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ ԵՎ ՉԱՓԵՐԸ ՈՐՈՇԵԼԸ**

8. Մշտադիտարկումների իրականացման նպատակով հատկացումները կատարվում են Հայաստանի Հանրապետության դրամով:

9. Նախնական հատկացման չափը սահմանվում է համապատասխան ընդերքօգտագործման մասին պայմանագրով, և այն չպետք է պակաս լինի մշտադիտարկումների իրականացման նպատակով կատարվող հատկացումների հաշվարկման բազային չափի 15 տոկոսից:

10. Հատկացման ժամանակահատվածի յուրաքանչյուր տարվա կտրվածքով մշտադիտարկումների իրականացման նպատակով հատկացման ենթակա ընթացիկ հատկացումների գումարը չպետք է պակաս լինի հատկացումների նվազագույն չափից, որը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$ՄՎ = (ՀԲ-ՆՎ)/Ժ,$$

որտեղ՝

1) ՄՎ-ն մշտադիտարկումների իրականացման նպատակով կատարվող տարեկան հատկացումների նվազագույն չափն է՝ դրամներով, ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ.

2) ՀԲ-ն մշտադիտարկումների իրականացման նպատակով կատարվող հատկացումների հաշվարկման բազային չափն է՝ դրամներով.

3) ՆՎ-ն մշտադիտարկումների իրականացման նպատակով կատարվող նախնական հատկացման չափն է՝ դրամներով.

4) Ժ-ն մշտադիտարկումների իրականացման նպատակով վճարումների կատարման ժամկետն է՝ տարիներով, բացառությամբ վերջին տարվա:

#### **V. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ**

11. Մշտադիտարկումների իրականացման նպատակով կատարվող հատկացումների գլխավոր կարգադրիչ է համարվում լիազոր մարմինը:

12. Տվյալ տարում մշտադիտարկումների իրականացումը ֆինանսավորվում է լիազոր մարմնի արտաբյուջետային հաշիվ մշտադիտարկումների իրականացման նպատակով մուտքագրված գումարների հաշվին:

#### **VI. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

13. Սույն կարգի կիրառման հետ կապված վեճերը լուծվում են դատական կարգով:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**